Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Шиц
377, 378, 383
379, 380, 381, 382

2000

921

# ՆՈՐ ՔՆԱՐ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԵՏՐԱԿ Գ.

Ի ՄՈՍԿՎԱ

1856.

# ՆՈՐ ՔՆԱՐ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԵՏՐԱԿ Գ։

Լաւ
379

# ԺՈՂՈՎԱԾՈՒ ԵՐԳՈՑ

## ՊԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՃԱՀՐԱՄԱՆԵԱՆՑ

# ՆԻՐԱՆԻ

## ՄԱԿԱՆՈՒԱՆԵԱԼՈՅ

’Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱՑ

ՈՍԿԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ ԵՐԵՒԱՆԵՑԻ

*Աւելի՛ փող կիտելով՝ աշխարհէն ի՞նչ պէտք է տանես,*
*Չե՞ս գիտում՝ մարդոյ կեանքը՝ հողին հաւասար են առում։*

Երգ. 12, տող 4.

3010
25

’Ի ՄՈՍԿՈՒԱ
’Ի տպարանի Ալէքսանդրայ Գօթիէի։
1856.

1574

**Печатать позволяется:**

на основаніи отзыва Адьюнкта Санктпетербургскаго Университета Бероева, съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Санктпетербургъ. Сентября 26 дня, 1855 г.

*Цензоръ Н. Елагинъ.*

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССР им. А. Мясникяна
379-2003
2Ф-378 6102 38
V

# ՆՈՒՐԱՆՈՒ ԵՐԳԵՐՆ

## Ա.

Օգնեցէք ինձ, սիրելք, սիրոյ սիրաբանս գնաց,
Ուշ գոլ՝ շուտ կորուսի, կեանքս՝ հոգիս՝ ջանս գնաց,
Ծաղիկներս սալորաց Թողաւ այգեբանս՝ գնաց,
Երգելով բուլբուլներս՝ վարդ ու բուրաստանս՝ գնաց
Այժմ լալով մնացի, զուր իմ աշխատանս գնաց։

Ափսո՜ս, որ վիզս ծռած՝ ինձի քարեքար տուեցի,
Մէկ սիրականի համար մինչև հոգւոյս ցաւեցի,
Ինձի սէրին ծախելս ամենայն տեղ համբաւեցի,
Վերջին դատարկ մնալով, ես ինձանից խռովեցի,
Չի՛ իմացեց սիրելիս այսքան նեղութեանս՝ գնաց։

Ինձ մնաց նորա սիրոյն էրվելս այսքան ժամանակ,
Քեարամին՝ Ասլուն, ասեմ, թէ փարվանին[1] տամ օրինակ,
Զգիտեմ իմ բաղտիցն էր, թէ թշնամիք կային ներհակ,
Ջոկեցին սիրականէս, թողեցին ինձմէն միայնակ,
Ո՛չ քուն ունիմ, ո՛չ դադար, վերջ հանգստարանս գնաց։

---

[1] ԹԻԹԵՌՆ.

Առաջին սէրն ասեմ, Թէ հիմա կարօտ մնալը,
Երանի՛ Թէ չլինէր այդքան սէրի մօտենալը,
Արիւն արտասունք լալով անգութ ցաւի տիրանալը,
Վախումեմ՝ կարօտ մեռնեմ, չլինի կրկին տենալը [1],
Աշխարհն ընդ իս մԹնումէ, լոյս արեգականս գնաց։

Ամենինչխանութիւնս ծախեցի մէկ սիրականի,
Նրան գերված ծառայ եմ մինչև օրն դատաստանի,
Թէ կամի դուԹաղ [2] անի, Թէկուզ [3] ձեռօքն սպանի,
Հրեշտակը Նիրանու [4] չոր ջանէն ինչ պէտք է տանի,
Երբ մին հոգի ունէի, առաւ սիրականս՝ գնաց։

## Բ.

Ասացեալ ՚ի հանդէպ «Մինչ երբ դու համառեհեա- գոզչաչանս» Պարոն Շէրենի խաղին.

Ինձ շուտ մոռացար իմ սիրականս,
Էլ չի՛ նայում այդքան նեղութեանս,
Մինչ ե՞րբ չարչարի հոգի ու ջանս,
Վասն է՞ր չի ընկալնում աղաչանս,
Մի՞Թէ չի լսում ազնուականս։

Սիրայդ ամէն օր լալս իմացի,
Մէկ հարցրու ահվալս [5] իմացի,

---

[1] Տեսանելու։ [2] Կալանաւոր, գերի, բանդարկեալ։ [3] Թէ կուզէ, եԹէ կամի։ [4] Սա մականուանէ նաև՝ Շահրի։
[5] Հանգամանս, որպիսութեանս, պարագայս, գործս։

Անյոյս դողով՝ մահ գալս իմացի,
Քեզ համար հոգի տալս իմացի,
Ջուր մի անիւ բաղում աշխատանս։

Մինչ ե՞րբ, սիրելի, ինձ մոռանաս դու,
Մինչ ե՞րբ չերեւիս ինձ, հեռանաս դու,
Այլ պէտք է սիրով սիրտս բանաս դու,
Համ[1] ուրախութիւնս կամենաս դու,
Որով[2] դու ես յոյս ու օգնականս։

Տեսայդ կարօտիս մի անիր աղքատ,
Ցո՛յց ինձ յամենայն ժամ սէրդ առատ,
Այլոց նայելով՝ ինձ մի ասիլ վատ,
Արժան չէ սիրոյ գերին անել եադ,
Պէտք է ակնարկել, իմ աննմանս։

Սիրով Նիրանուն յաղթութիւնդ վաղ,
Ո՛չ մեռեալ եմ, ո՛չ կենդանի, ո՛չ սաղ[3],
Խաւարմանս դու լոյս անշամանդաղ,
Վա՛ն իմ ծարաւիս մէկ աղբիւր ես պաղ՝
Եւ կենդանութիւն, ո՛վ սիրաբանս։

---

[1] Եւ, եւս, նաեւ, ըստ ամէն օրինակի։ [2] Որովհետեւ, քանզի, վասն զի։ [3] Ողջ, առողջ, կենդանի, ողջանդամ։

## Գ․

Ասումես՝ քու սիրելին եմ, դառնումես՝ լաղ[1] ես անում,
Ուրիշին սէր ես տալի, ինձի բրդամաղ ես անում,
Ինձանից հեռանումես, խալխի[2] քէյֆը[3] չաղ[4] ես անում,
Համ խելքս գլաւումես, համ վրէս ծիծաղ ես անում,
Ամենայն տեղ խօսալուս՝ խօսքերս սալսաղ[5] ես անում։

Այքան քեզ սէր եմ պատմում, դուն սէրիցը չես ամաչում,
Էս որքան աղաղակ այ, որ ես քեզնի եմ աղաչում,
Քու սրտացաւդ ես եմ, միայն ինքդ չես ճանաչում,
Երեսիս ինձ գովումես, մաքումդ անդէտ ես կոչում,
Փոքր ինչ սէր ցոյց տալով՝ ինձ քեզնի մատաղ ես անում։

Քեզ հետնայ[6] խօսալու եմ, միայն թէ չունիմ ժամանակ,
Չի պէտք է կուլու անեմ, ո՛չ թուր ունիմ՝ և ո՛չ դանակ,
Ինչպէս որ ես եմ քաշում, դու ինքդ էլ լինիս նոյն դունակ,
Ետոյ ինձի ճանաչես, տես, թէ խեղճ էր նա մինակ,
Իմ չափովս չես քաշիլ, դու, քեզնի ղօչաղ[7] ես անում։

Մէկ սհաթ[8] չի տեսնելուս, օրս՝ տարի է անց կենում,
Սէրդ ինձ գործ եմ չինել, ուրիշ գործի չեմ մօտանում,

---

[1] Կատակ, ծաղր, խաղոյ բանք։ [2] Ստեղծուածք, Մարդիկ, ժողովուրդ, խուժան։ [3] Ուրախութիւն, խրախութիւն, զուարճութիւն, հաճոյք։ [4] Գէր, շատ, լի, ուրախ։ [5] Յիմար, անտեղի, խեղկատակերէն թեթեւ։ [6] Ընդ։ [7] Քաջամարդիկ, սրտեայ, քաջ։ [8] Ժամ, պահ, ժամանակ։

Թէ քեզ միայն ունենամ, աշխարհըն էլ ինչ եմ անում,
Աստծանից բան չեմ ուզում, ես քո սէրդ եմ կամենում,
Ինձ Թօղումես դու լալով, այլոց հետ մազաղ[1] ես անում:

Արի՛, անխելք մի՛ լինիլ, գովելի է յուսով սէրը,
Որովհետև պատմումէ յամենայն տեղի մեր Տէրը,
Սէրին չափ չի՛ ունենալ, անպատմելի է բաները,
Եթէ մին խոր նկատես, համ զարարն[2] այ չատ՝ համ խէրը[3],
Հէնց[4] գլխես էդ սէրովը Նիրանուն չրաղ[5] ես անում:

## Դ.

Ի՞նչ վատութիւնս տեսար, ինձ եադ արիր, հոգի ջան,
Ուրիշների հետ սէրդ հաստատ արիր, հոգի ջան,
Աչքերիս արտասունքն Եփրատ արիր, հոգի ջան,
Էդ սովորութիւնները դուն վատ արիր, հոգի ջան:

Այրեցիր ինձ, անիրաւ, հալ[6] ու մաշ[7] արիր ջանս,
Քեզանից ձեռք չե՛մ քաշիլ, դու ես իմ սիրականս,
Խելագար ման եմ գալի, չի գիտեմ օթևանս,
Սիրտս ցաւով լցուցիր, բարբադ[8] արիր, հոգի ջան:

---

[1] Ուրախութիւն, խրախութիւն, զուարճութիւն, հեշ-տութիւն: [2] Վնաս, վճար: [3] Օգուտ, շահ: [4] Նոյն-պէս: [5] Սան, ջահատան, ճրագատար, ճրագանէջ: [6] և [7] Հալումաշ կամ հալեւմաշ՝ բառոյ ցա-հալող մաշող. մաշարայ, մաշարայական, ծերունական ախտ. ընթացաւութիւն: [8] Աւերեալ, խանգարեալ, կործանեալ:

Ինձ էսպէս տեմնողները քեզ չե՛ն տալ դարդիման [1],
Վերջին ամօթ կ'կրես, կասեն, պատճառ է արեան,
Այսքան չարչարանքներդ մի՞թէ չէ ինձ բաւական,
Փոխանակ սիրոյ՝ ցաւս առատ արիր, հոգի ջան։

Աղաղակս չես լսում, մայեամ [2] քու սիրտդ քար այ,
Իմ այսքան դեգերվելս դիփ քո սիրոյդ համար այ,
Քեզանից՝ քեզ գանգատեմ, դատաստանս ուղիղ արա՛,
Զրկեցիր ինձ քու տեսոյն, աղքատ արիր, հոգի ջան։

Ինձ տեմնելուս, սիրելի, հէնց [3] գլխաումես դուշման [4] եմ,
Սիրոյդ՝ կեանքս փչացաւ, չե՛ կարելի փոշմանել,
Գիշեր՝ ցերեկ, ուզումեմ, պատկերիդ թամաշ [5] անեմ,
Դու սիրամարգ՝ ինձ սիրով սէյեադ [6] արիր, հոգի ջան։

Դու լաւ գիտես, սիրական, ինց [7] այ սէրի կրակը,
Տան և մէկ ամիս լաւ [8] այ ողորմելի սոխակը,
Մի՛ չարչարիլ Նիրանուն՝ հասելայ ժամանակը,
Հէնց իմացիր գերիդ այ, աղատ արիր, հոգի ջան։

---

[1] Ցաւալից, ցաւագին, սրտացաւ։ [2] Միթէ, մի՛ արդեօք, մի՛ եթէ։ [3] Նոյնպէս, երբ թէ, որպէս զի։ [4] Թշնամի, հակառակորդ, ոսոխ, ախոյեան։ [5] Տեսիլ, տեսարան, նշմարանք. հայեցք, նայեցք։ [6] Որսորդ, որսական։ [7] Որպէս, նման, եթէ, ինչպէս։ [8] Ձայն։

## Ե.

### ՚Ի հանդեպ «Աստուծոյ՝ աշխարհը քեզ ինչի գովական են տեսած» Պարոն Շերենի խաղին.

Այսումես՝ խեղճ ման գալով, բոլորն ինձ արդար են ասում,
Չես գիտում վատ համբաւդ՝ ուրիշ տեղ, հազար են ասում,
Լեզուդ չի պահպանելով՝ բնութիւնդ չար են ասում,
Հենց գիտես շատ խօսացող մարդերին ճարտար են ասում,
Ծաղր են անում, խնդում են, անմիտ՝ խելագար են ասում:

Այլոց լաւ սենեակիցն քու փոքր տունն է գովելի,
Աշխատիր վատ չի՛ լինիս, մարդու անունն է գովելի,
Ոչով քեզ դաւօշ[1] չի տալ, թէ ունիս՝ բունն[2] է գովելի,
Անզգամ կնոջմէն՝ էն տիրասէր շունն է գովելի,
Որքան թակես՝ չի փախնիր, նրան հաւադար[3] են ասում:

Շատ մարդ դատարկ խօսալով՝ ամենայն տեղ, աչքից ելաւ,
Թէ քանի՛ դատարկ խօսքեր եփեցին, չելաւ մին փլաւ[4],
Որովհետեւ աննիւթ այ, ո՛չ հաց կ՚լինի՝ ո՛չ հալաւ[5],
Դրան շատ մի՛ հետեւիլ, վերջը կանես քո գլխին ցաւ,
Դու քու դարդերդ լացիր, որ քեզի անճար են ասում:

---

[1] Երկու հողէն պղնջարան: [2] Բոյ, բոյն: [3] Սիրահար, խանդակաթ, հաւատարիմ, մտերիմ. յարէն յոյ, ըն-հունք լենէն ունէք: [4] Չոր ապուր. կերակուր ինչ յօրինեալ յորիզոյ: [5] Հանդերձ, զգեստ, ագանելիք:

Գովասանք շատ ես ուզում՝ Նրա [1] համար, որ անբան ես ,
Գովասանքի Նայելով՝ չես իմանում, Թէ ի՞նչ անես ,
Քու տունդ լաւ պահելու ամենայն վախտ պարտական ես ,
Աւելի փող կիտելով՝ աշխարհքէն ի՞նչ պէտք է տանես ,
Չե՞ս գիտում մարդոյ կեանքը հողին հաւասար են ասում։

Շնորհակալութիւնը ըսկի [2] մարդոյ տուն չի՛ չինիլ,
Դու դրան հաւանելով , քեզ սեպհական կայք մի՛ անիլ,
Հազար բեռը ունենաս՝ ոսկի ու արծաթ չի՛ լինիլ,
Ներանի, դուն փող մի՛ տալ էդպէս դատարկ բաներ գնիլ,
Էդպէս բանին հաւանող մարդերին յիմար են ասում։

## Ջ.

Առանց քեզ եմ անմխիթար, դուշա ջան,
Մէկ ցաւս է հարիւր հազար, փաշա ջան,
Աղաչումեմ՝ ինձ մօտդ տար , դուշա ջան ,
Ես մին ծառայ՝ դու բարերար, փաշա ջան ,
Մի՛ սպանիր ինձ չարաչար, դուշա ջան։

Հեռաւորը միշտ Ճանապարհ կ՚սպասի ,
Մէկ բարեխիտ մարդ տեսնի [3], խաբար [4] լսի ,
Իւր սիրելու համբաւը բարի խօսի ,
Անցեալ սէրը միտ բերի , լա՛լ սկսի ,
Վասն սիրոյ պատուի համար , դուշա ջան։

---

[1] Նորա։ [2] Բնաւին, ամենեւին։ [3] Տեսանէ։ [4] Լուր, համբաւ, տեղեկութիւն, խօսք, զրոյց, բան, աւետիք։

Սէր քաշելը, սիրելի, դժուար բան այ,
Հաստատ սէր ունեցողը ո՞նց դիմանայ,
Ե՛րբ որ սիրելուցը մէկ գիր ստանայ,
Կարելի է նրանով ուրախանայ,
Չի՛ մտածիլ, թէ եմ օտար, փաշա ջան։

Միտս ընկնելով բուլբուլի պէս խօսալդ,
Կաքաւակերպ մանտր[1] մանտր ման գալդ,
Ամէն դիմօք ինձի խրախոյս տալդ,
Երբ երազում տեսնումեմ գիւլ[2] ջամալդ[3]
Ման եմ գալի ո՛նց խելագար, դուշա ջան։

Գրով տօնդ շնորհաւորեմ, սիրելի,
Տեսութեանդ պարտաւոր եմ, սիրելի,
Ներեցէ՛ք, որ հեռաւոր եմ, սիրելի,
Մի նկատիլ, թէ այսօր եմ, սիրելի,
Ես Նիրանն եմ քեզ սիրահար, դուշա ջան։

## Լ.

Նոր 'ի Նորայ սիրելուցս սէր տեսայ,
Սիրելուս հետնա հոգի՝ աղբեր տեսայ,
Եւ անորոշ մէկ մէկուց ընկեր տեսայ,
Ուրախացայ, երբ դրութիններ տեսայ,
Փառք Աստուծոյ ցնծութեան օրեր տեսայ։

---

[1] Մանր։ [2] Ծաղիկ, վարդ։ [3] Տեսիլ, դէմք, դէմքերեսու-թիւն, երեսանութիւն։

Այսուհետեւ չե՛մ ես օտար յաշխարհի,
Ստացայ փափագս, չի՛ մնաց թերի,
Էլ չունիմ սէր այլ իմն սիրահարի,
Ձեզ Աստուած ինձ համար շատ չի՛ համարի,
Որովհետեւ շատ դժուար դարեր տեսայ։

Քարացեալ սիրտս փափկացաւ, սիրելի,
Իմ նեղութիւնս վերջացաւ, սիրելի,
Մեռեալ կեանքս առողջացաւ, սիրելի,
Երբ տեսայ՝ ցաւս վերացաւ, սիրելի,
Այսքանն ինձի բաւական էր, տեսայ։

Գրութիւնդ նորալուր է, հոգի ջան,
Ինձ հովացուցիչ աղբիւր է, հոգի ջան,
Գիտութիւնդ երկսայրի սուր է, հոգի ջան,
Որ Էննէ պարգեւ ամուր է, հոգի ջան
Ո՛չ իմաստնում, ո՛չ վարժարաններ[1] տեսայ։

Լաւ իմացայ, ուր գնամ՝ ինձ հետ ես դու,
Աշակերտութեանս վարժապետ ես դու,
Մոլորելոյս այժմ կարապետ ես դու,
Ձգիտէի այդքան սրտագէտ ես դու,
Ես Նիրանն եմ, շատ սիրահարներ տեսայ։

---

[1] Վարժարաններուն։

## Ը.

Որքա՜ն ցաւ է՝ անխնամ սիրելու սէրին ջանալը,
Պատիժ ու չարչարանք այ նրա ետևեց [1] գնալը,
Տե՛ս, թէ ո՛րքան դժուար այ խօսիլ՝ երեսը տենալը,
Ինձ ասումեն. ձեռք քաշի, խեր չէ էդպէսն ունենալը,
Ի՞նչ անեմ, որ չե՛մ ուզում սիրելուցս հեռանալը,
Քանի ինձ հետ սէր ունի չի՛ վայելիլ մոռանալը:

Ասումեն. վա՞ն էր սիրեցիր, էն ապերախտէն ձեռք քաշի,
Սիրտ կրակումը կ'երվես, խելք ունիս՝ վախտէն [2] ձեռք քաշի,
Նրա համար մի՛ չարչարվիլ, թո՛ղ՝ էն ամբախտէն ձեռք քաշի,
Նրանով թագաւոր լինիս՝ թագէն ու թախտէն [3] ձեռք քաշի,
Քեզ թողալու է վախճանը, նրա երախտէն [4] ձեռք քաշի,
Միայն ինձ՝ անխրատականի՝ արժան չէ՛ յաշխարհի մնալը:

Նրան դու մէնակ չես սիրում, ուզումես բոլորն ասեմ,
Նրա սիրոյն դեգերուած քանի՞ հազարաւորն ասեմ,
Մի՛ դու զուր կեանքդ մաշիլ՝ ափսո՜ս քու ամէն օրն ասեմ,
Միայն դրանից ձեռք քաշի, քեզ սէրի թագաւորն ասեմ,
Դառն աշխատող, դատարկ մնող՝ քանի՛ գանգատաւորն ասեմ,
Բայց ինձ չէ՛ հարկ սէրի միջին էդպէս բաներ իմանալը:

Չարակամ մարդէն, Նիրան, օգուտ չունիս, հեռաւ կացիր,
Նրա խօսքին մի՛ նայիլ, էնպէսին շուտով մոռացիր,
Ճանաչի բարեկամըդ և սիրականըդ իմացիր,
Չարին մի՛ տալ ժամանակ առ քեզ գալու՝ զգուշացիր,
Մտածիր յամենայն ժամ քու վերջին օրերդ՝ լացիր,
Որ դժուար է սիրելին սիրելուցը նեղանալը:

---

[1] Ետևէ, յետս: [2] Ժամանակէ, [illegible] ժամու:
[3] Տախտ, գահ, աթոռ, գահոյք: [4] Երախտիք, բարերարութիւն, լաւութիւն, աշխատութիւն:

## Թ.

Էն ի՞նչպէս սիրական այ, ինձ ընկերութիւն չի՛ անիլ,
Կ՚քանդի եղած սիրտս, միտք՝ համբերութիւն չի՛ անիլ։

Գեղեցկութեանս չի՛ խղճում էն աշխարհի անիրաւը,
Նրա արածը՝ ինձի եօթը թագաւորութիւն չի՛ անիլ։

Սիրտս հազար կտոր այ, համ միտք ու խելքս ցիր ու ցան,
Չի՛ գալ էն անիրաւը՝ մարդասիրութիւն չի՛ անիլ։

Ի՞նչ այ էդքան ցաւերը՝ իմ սիրականին ասացէք,
Ընկերին՝ ընկեր մասին էդքան չարութիւն չի՛ անիլ։

Ես ո՛րքան մօտանումեմ՝ նա հեռանումայ ինձանից,
Եթէ ինձ սիրական այ, էդքան թերութիւն չի՛ անիլ։

Նիրանու սիրականը, տե՛ս, ո՛րքան անողորմ այ,
Ուրիշներին կ՚հողուի, բայց ինձ սիրութիւն չի՛ անիլ։

---

## Ժ.

Ներեցէք իմ անբախտիս՝ խորհուրդս բանամ, սիրական,
Փափագս լցուցանեմ, կարօտ չի՛ մնամ, սիրական,
Խղճալի կեցութեանս չի՛ տարար խնամ, սիրական,
Քեզանից այսուհետև ի՞նչ ուրախանամ, սիրական,
Բայց, ասեմ, մնաս բարի, ուզումեմ գնամ, սիրական,
Ո՛վ գլուխ՝ ողջ կլինի՞մ, որ մէկ էլ անինամ [1], սիրական։

---

[1] Տեսանեմ։

Այս տեսնեմ, անիրաւ, քու մասին ինչե՞ր չի տեսայ,
Լաւ անունս փուչ արի, վատ բամբասանքնե՞ր չի՛ տեսայ,
Չի՛ քաշած՝ ինչե՞ր մնաց․ ինչ տեսակ ցաւեր չի՛ տեսայ,
Հաստատուն սրտիս բերդը քեզանով աւե՞ր չի՛ տեսայ,
Մինչև հոգիս մաշեցիր, քեզնից հաստատ սէր չի՛ տեսայ,
Քանի մօտ էի՝ չի՛ տեսայ, հիմա հեռանում, սիրական։

Քու սիրովդ ստացած ցաւերի համարն ասեմ,
Քանի՞ տեսակն ես ուզում, ամէնից հազարն ասեմ,
Քանի՞ փորձանքն ասեմ, կամ թէ քանի՞ դարն ասեմ,
Թէ կամիս քաշն իմանալ, Այրարատեան սարն ասեմ,
Չի՛ քաշած այս ցաւերս՝ ես բոլոր աշխարհն ասեմ,
Այս անտանելի ցաւին ես ո՞նց դիմանամ, սիրական։

Անկատար խօսքերիցդ ինձանում մէկ յոյս չի՛ մնաց,
Նեղութիւնս աւելցաւ, սրտիս խրախոյս չի՛ մնաց,
Չորացաւ կենաց ծառս, ամենևին բոյս չի՛ մնաց,
Դիփ կեանքս զուր անցուցի, ոչինչ իմ խղճոյս չի՛ մնաց,
Արիւն արտասունք լալով, աչքերումս լոյս չի՛ մնաց,
Քեզանից իմ վաստակս այսքա՞ն իմանամ, սիրական։

Ճշմարիտ են ասել, թէ էհթիբար [1] չունի կնանին [2],
Սէրը երբէք չի՛ տուած ժամանակիս դարդիմանին,
Տեսանեմ քեզ, սիրելի, յուսուր միւսում դաստանին,
Եախէդ [3] բռնած քաշելով, ասեմ․ թէ ես եմ Դիւանին,
Յայնժամ ես գանգատաւոր քու ձեռնէդ ահեղ ատենին,
Դու լինիս ինձ պարտաւոր, ես արդարանամ, սիրական։

---

[1] Աստուածավախութիւն, հաւատարմութիւն, Տէրտութիւն։
[2] Մարդ։ [3] Փողպատ, օձիք։

3779-2003
(2019 / 39)
Гос. Публ. Библиотека ... А. Мясникян

# ԺԱ.

Գնա՛ գնա՛ երկու լեզուէն [1] սիրական,
Օրն մէկ սիրականի ես սիրում դու.

Թէ այդպէս է ամէնայն սէր անէլըդ,
Ինձ խաբելով՝ ինչի՞ ես դէգերում դու.

Ուրախ սիրտս լացնումես , բարեկամ,
Մի՞ թէ ինձ երեխայ ես համարում դու.

Փոքր 'ի չատէ լաւ էր անց կենում օրս ,
Ի՞նչ պատճառաւ վատ ես փոխաբերում դու:

Ինձ ասումէն· Յավէտդ քեզ մոռացաւ ,
Ո՛վ դու Յակոբ՝ ի՞նչպէս ես համբերում դու.

Նոր իմացայ քու ապերախտութիւնդ,
Շինուած սիրտս մէկէն ես աւերում դու.

Սիրականդ Թողումես , ո՛վ սիրելի ,
Ուրիշներին սիրովն ես երերում դու.

Թէ հաստատ սէր չունէիր առ Նիրանին ,
Վա՛ն էր էիր կրակումդ երում դու:

---

[1] Երկեան, երկլեզու , երկխօս , խարդախ , խաբեբայ. երկդիմի խօսք ունեցող , կամ մարդ:

## ԺԲ.

Քու մասին, ո՛վ սիրական, ասածս արդարև ասեմ,
Զանձրութիւն չ՚լինի՝ խօսակցութիւնս թեթև ասեմ,
Ցաւովդ մոլորվելով, օրըս՝ սահաթըս սև ասեմ,
Լոյս ամպին օրինակ արտասունքս անձրև ասեմ,
Էս աւել եղելութիւնս՝ չ՚գիտեմ, ի՞նչ ձև ասեմ:

Պէտք է մինչ ե՞րբ, սիրելի, անմխիթար լալ ունենամ,
Ցայը կեանքս կէս արեց, էլ ի՞նչպէս յուսալ ունենամ,
Մինչև ե՞րբ արտասուալից՝ Ճարահատ ման գալ ունենամ,
Իրաւունքը չի՛ ներում, ես էս տեսակ հալ [1] ունենամ,
Արտասունքն ինձ կողողի, քեզ ցաւերս մինչև ասեմ:

Գեղեցիկ ես գեղեցիկ, Յովսէփայ պատկերն ունես,
Սիրտ մաշող սէրիդ միջին Վարդանայ սուսերն ունես,
Գիտութեան համբաւելին՝ գեղեցկութեան գերն ունես,
Կամէի փորձել, թէ արդեօք առաջին սէրն ունե՞ս,
Ասացի. բարեկամիս երթամ՝ սիրով բարև ասեմ:

Ո՛չ ես այսքան սիրաբան, ո՛չ դու՝ սէր, ատիչ պիտէիր,
Ո՛չ ես զուր ջանք ունենող, ո՛չ դու նախատիչ պիտէիր,
Ո՛չ ես էս սէրին գերի, ո՛չ դու խրատիչ պիտէիր,
Զայիր ինձ ցաւերդ, տուիր՝ փարատիչ պիտէիր,
Ինչ ասեմ՝ քու տուածին, ես հիմա ինձ պարգև՞ ասեմ:

Չկայ մինն ինձի ասի. ի՞նչ է քու ջանքդ, Նիրանի,
Լինումէ որովհետև զուր աշխատանքդ, Նիրանի,
Ո՛չ ցաւդ կայ իմանող, ո՛չ աղերսանքդ, Նիրանի,
Ընծայիր էն ասածիդ այսքանի բանքդ, Նիրանի,
Նա կասի՝ վա՜յ չի՛ կարդամ էս անճարին, արև ասեմ:

---

[1] Դրութիւն, որպիսութիւն, վիճակ, կեցութիւն:

## ԺԳ.

Ամէն միտ ընկնելով սիրականս իմ,
Տոչորվումէ միանգամայն ջանս իմ,
Մէկ միտ դրէք անյոյս երերմանս իմ,
Ո՛վ սիրելիք, տեսէ՛ք չարչարանս իմ,
Մոլորեալ եմ, չե՛մ գիտում սահմանս իմ,
Այս կենացս բարւոք է վախճանս իմ։

Մօտդ գալու իլլաջ[1] չունեմ՝ ճար չունեմ,
Ծովու ալեաց նման եմ, դադար չունեմ,
Հանգամանքս ասելու մէկ եար չունեմ,
Մաջնուն ելած՝ Լէյլուցս խաբար չունեմ,
Անճարացեալ եմ, մէկ սիրահար չունեմ,
Մոռացել եմ մինչև ազգականս իմ։

Քաղցր ձայնդ քանի լսեմ՝ ջան կասեմ,
Հրեշտակ ես՝ գեղըդ աննման կասեմ,
Պայծառ դէմքդ լոյս արեգական կասեմ,
Առատութիւնդ նորոյ գարնան կասեմ,
Չեմ սխալիլ քու գեղոյդ արժան կասեմ,
Թէ հարցանես ուղիղ դատաստանս իմ։

Ես քու սիրոյդ արժան չէ լալով մեռամ,
Անմխիթար և անյոյս գոլով մեռամ,
Սիրոյդ նամակին սպասելով մեռամ,
Տարաբախտութեանս ողալով մեռամ,
Աղաղակելով, կսկծալով մեռամ,
Օտարացաւ սիրոյ սիրաբանս իմ։

---

[1] Հնար, միջոց. ճար, դեղ։

Սէրըդ մէջն ընկնողըն էրված կըլի[1],
Նէրանու նման դեղէրված կըլի,
Խէլք ու միտքը գլխըցը ցրուած կըլի,
Չի կարողանալ խօսի, լռուած կըլի,
Թէ կենդանի էլ մնայ, տարուած[2] կըլի,
Սուտ չեմ ասում այդքան զօրաւոր եմ։

---

## ԺԴ.

Ի հանդէպ «Աստուծոյ գիտացէր՝ ոնց գիտէաս, Միթէ ես էլ տար՝ դարդէս որն մէջ ծար» Աշըգար Ադամի խաղին.

1. Այսմէս ցամաքեր, ոնց ցամաքեմ. միթէ ես եմ ջուր՝
վաւվամեմ առանց հուր,
Սէրըդ ջիկեարըս[3] կըրատումէ Նըշտարի[4] պէս սուր՝
մէկ ցաւս է հարիւր,
Աշխարհն ինձ համար լոյս չէ տալիս՝ մթնումէ մուր[5],
երբ տրտում եմ՝ տխուր։

2. Սէրդ ինձ հանապազ չարչարումէ՝ չի տալիս կենդում,
հոգիս է աւանդում,

---

[1] Կ'ընկնի։ [2] Խելագար, խելացնոր։ [3] Լեարդ, սիրտ։
[4] Նշտէր, նշտակ, նշտրակ։ [5] Դուրդ, փխուր. պղտոր։

Քեզնից առաւել, ո՜վ սիրահար, գանգատեմ՝ այլ ո՞ւմ,
աշխարհն է Թնդում,
Վա՜յ իմ այսքան աշխատանացըս, որ անցանի զուր,
ինձ կսկիծ է մրմուռ։

3. Վասն է՞ր կամիս պատժել աղքատիդ չարաչար վշտօք՝
սարսափելի վիրօք,
Այսքան աղաչումեմ, աղերսում քեզ պաղատանօք՝
և լալագին աչօք,
Տեսոյդ կարօտիս արժանի արա՛, ուրախութիւն տուր,
խղճալի մի Թողուր։

4. Ձայնդ լսելու փափաքումեմ՝ մէկ խօսիր անուշ,
վասն է՞ր բարբառիս յուշ,
Երբ բարկանալով, երբ սաստկութեամբ արկանումես փուշ,
ես ընկնումեմ զգուշ,
Երբ արկանէ սէրդ յոտս իմ երկաթեայ անուր [1],
ո՛հ երկիւղ է զարհուր։

5. Այլոց տալով սէրդ տեսնելուս ցաւումեմ շատ վախտ՝
էլլի [2] ես եմ անբախտ,
Վասն այն պատճառաւ սրտի իմում սէրդ է անխախտ,
բայց դու ես ապերախտ,
Վա՜յ քեզ, Նիրանի, ցաւերդ է հազարաւոր բիւր՝
արտասուքդ է աղբիւր։

---

[1] Օղակ։ [2] Լաւ, բարեջաւ, հա հա։

